ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/25

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.01.2019թ. թիվ 27/26-3/1180-19 գրությամբ «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 01839944/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.01.2019թ. թիվ Ե/40/169-19 գրության հիման վրա, 30.01.2019թ. նախաձեռնել է «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. **<u>«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 23.01.2019թ. թիվ Ε/40/169-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից 06.12.2018թ. հրապարակվել է ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-30/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որով կայանի կարիքների համար ձեռք էին բերվելու ռեզերվային դիզել-գեներատորային էլեկտրակայանի մասնաշենքի կոնստրուկտիվ էլեմենտների սեյսմոկայունության վերագնահատման և հաշվետվության ներկայացման ծառայություններ:

Ընթացակարգի հրավերում սահմանվել է լրացուցիչ պայման, ըստ որի Կատարողը պետք է ունենա ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 17.12.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի որակավորումը հիմնավորող փաստաթղթերում Հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնակիցը չէր ներկայացրել ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձը հիմնավորող փաստաթուղթ:

Արձանագրված անհամապատասխանության շտկման նպատակով մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հիմնավորող փաստաթղթերը: Անհամապատասխանությունը մասնակցի կողմից չի շտկվել, ինչի արդյունքում Հանձնաժողովը մերժել է «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի հայտը»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն 09.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն մասնակցել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 2018թ. դեկտեմբերի 6-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-30/18» ծածկագրով մրցույթին: Առ 19.12.2018թ. ստացել ենք էլեկտրոնային նամակ հետևյալ բովանդակությամբ.

«Որպես «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-30/18» ծածկագրով ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, Դուք պետք է ներկայացնեք հրավերով պահանջվող որակավորումն հիմնավորող փաստաթղթեր: Խնդրում եմ լինել ուշադիր և բաց չթողնել Ձեզ տրամադրված եռօրյա ժամկետը: Որակավորումն հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 21.12.2018թ.:

Մեր կողմից առ 21.12.2018թ. ներկայացվել են բոլոր պահանջված փաստաթղթերը և ստացել ենք պատասխան նամակ հետևյալ բովանդակությամբ.

«Ուղարկված փաստաթղթերում առկա չեն ուղարկված պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրությունները, ակտերը, հաշիվ-ապրանքագրերը, ինչպես նաև հրավերում պահանջ կար, որ կատարողը պետք է ունենա ատոմային էլեկտրակայանների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձ: Խնդրում եմ շտկել»:

Առ 24.12.2018թ. մեր կողմից ուղարկվել է նամակ հետևյալ բովանդակությամբ.

«Այս պահի դրությամբ, ելնելով տեխնիկական պատճառներից, մենք չենք կարող ներկայացնել ատոմային էլեկտրակայանների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձը, չնայած այն հանգամանքին, որ մեր գլխավոր ճարտարագետ Զավեն Խլղաթյանը և ճարտարագետ Գուրգեն Նամալյանը, այլ կազմակերպությունների կազմում ՀՀ ատոմակայանի համար կատարել են նմանատիպ աշխատանքներ:

Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 2-ին թիվ 774-Ն որոշումով հաստատված քաղաքաշինության բնագավառում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության լիցենզավորման գործունեության կարգի, շենքերի և շինությունների հետազննման աշխատանքները կատարվում է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից, ինչպիսին հանդիսանում է մեր ՍՊԸ-ն:

Սա նշանակում է, որ Ձեր կողմից կազմակերպված մրցույթի «գնահատման փորձ» պահանջը չի բավարարում ինչպես թիվ 774-Ն որոշմանը, այնպես էլ ՀՀ քաղաքաշինության նախարարի 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված հավելված N 1-ի՝ «Բնակելի,

հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումներին»:

Մեր կողմից ուղարկվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-30/18» ծածկագրով մրցույթի Հավելված 1-ում՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ում բերված լրացուցիչ պայմանների 2-րդ կետով պահանջվող՝ ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձ չենք ներկայացրել, քանի որ նմանատիպ փորձ ունի ոչ թե «Սեյսմանախագիծ» ՍՊ ընկերությունն, այլ ՍՊԸ-ի ճարտարագետներ Զավեն Խլղաթյանը և Գուրգեն Նամալյանը: Սակայն նշված կարճ ժամկետում մասնագետները չկարողացան ներկայացնել պայմանագրերը կամ այլ հավաստող փաստաթղթեր Պատվիրատուին տրամադրելու համար:

27.12.2019թ. ստացել ենք նամակ հետևյալ բովանդակությամբ.

«Ձեր կողմից ուղարկված նամակը տրամարվել է գնահատող հանձնաժողովին (որի կազմում է նաև պատվիրատու բաժնի ղեկավարը), որին ի պատասխան տրամադրվել է հետևյալ պարզաբանումը, որ ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայության գնահատման փորձ ունենալու պահանջը տրվել է միջազգային փորձից ելնելով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջուկային կայանների սեյսմիկ անվտանգությունը գնահատելիս պետք է առաջնորդվել հատուկ մշակված նորմատիվներով՝ միջուկային կայանների համար»:

27.12.2019թ. ստացել ենք 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորումն հիմնավորող փաստաթղթերի գնահատման արձանագրությունը, որից հետո մեր կազմակերպության կողմից բողոքարկման քայլեր չեն ձեռնարկվել:

Ելնելով վերոգրյալից, գտնում եմ, որ «Սեյսմանախագիծ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար բավարար հիմքեր չկան»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Զավեն Խլղաթյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/25 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2019թ. թիվ 27/26-3/1180-19 գրությունը և կից փաստաթղթերը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 23.01.2019թ. թիվ Ε/40/169-19 գրությունը, «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-30/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-30/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 17.12.2018թ. նիստի թիվ 2, 26.12.2019թ. նիստի թիվ 3, 09.01.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն 09.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի հայտը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ռեզերվային դիզել-գեներատորային էլեկտրակայանի մասնաշենքի կոնստրուկտիվ էլեմենտների սեյսմոկայունության վերագնահատման և հաշվետվության ներկայացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-30/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին հայտ է ներկայացրել «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն:

Հրավերի 2.5 կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ինժեներային ծառայությունների մատուցված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

2) «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

3) «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով.

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

4) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են ձեռքբերվող ծառայության հետևյալ հատկանիշները. ««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ռեզերվային դիզել-գեներատորային էլեկտրակայանի մասնաշենքի կոնստրուկտիվ էլեմենտների սեյսմոկայունության վերագնահատում և հաշվետվության ներկայացում.

Ծառայությունների ծավալները ներկայացված են կից ծավալաթերթով՝ հաստատված «ՀԱԷԿ» ՓԲԸ ԳՃ-ի կողմից առ 08.09.2017թ:

Ծառայությունների հաշվետվությունները պետք է ներկայացվեն էլեկտրոնային և 3 օրինակ թղթային ձևով, ռուսերեն լեզվով»:

Բացի այդ, նույն հավելվածով սահմանվել են նաև լրացուցիչ պայմաններ, որոնց թվում՝ հետևյալ պայմանը. «Կատարողը պետք է ունենա ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձ»:

Հանձնաժողովի 17.12.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն կետով Հանձնաժողովը որոշել է առաջարկել առաջին տեղ զբաղեցնող մասնակցին ծանուցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

26.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստթղթերում առկա են նախկինում կատարված պայմանագրերը, դրանց հանձնման-ընդունման արձանագրությունները, հաշիվ-ապրանքագրերը, ֆինանսական միջոցները, որոնց մասով Ընկերության որակավորումը գնահատվել է բավարար, իսկ ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձը հիմնավորող փաստաթուղթն առկա չէ, և որոշել է առաջարկել Ընկերությանը մեկ աձշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը 09.01.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով դարձյալ արձանագրել է, որ ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձը հիմնավորող փաստաթուղթն առկա չէ: Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ մասնակցի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, որոշել է «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության կողմից ներկայացվել են Ընթացակարգի Հրավերով նախատեսվծ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշված լրացուցիչ պայմանների 2-րդ կետով պահանջվող՝ ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձը հիմնավորող փաստաթուղթ Ընկերությումը չի ներկայացրել, քանի որ

նմանատիպ փորձ ունի ոչ թե «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն, այլ ՍՊԸ-ի ճարտարագետներ Զավեն Խլղաթյանը և Գուրգեն Նամալյանը: Սակայն, Հանձնաժողովի կողմից տրամադրված ավելի քան սեղմ ժամկետում հիշյալ մասնագետները չկարողացան ներկայացնել պայմանագրերը կամ այլ հավաստող փաստաթղթեր Պատվիրատուին տրամադրելու համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)

- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

- 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-30/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

• 7.20 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 7.17 կետով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝

1) հանձնաժողովը գնահատում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին: Եթե

առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ մասնակցության իրավունքը և որակավորումը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները:

- 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի՝

- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո

գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

- 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

- 6-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք նախատեսված չեն նույն հոդվածով:

- 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալ լրացուցիչ պայմանը. «Կատարողը պետք է ունենա ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձ»:

- «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

- Հանձնաժողովն, ի թիվս որակավորումը հիմնավորող՝ Հրավերով նախատեսված փաստաթղթերի, Ընկերությունից պահանջել է ներկայացնել ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձը հիմնավորող փաստաթուղթ:

- 26.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստթղթերում առկա են՝ նախկինում կատարված պայմանագրերը, դրանց հանձնման-ընդունման արձանագրությունները, հաշիվ-ապրանքագրերը, ֆինանսական միջոցները, որոնց մասով Ընկերության որակավորումը գնահատվել է բավարար, իսկ ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձը հիմնավորող փաստաթուղթն առկա չէ: Հանձնաժողովը որոշել է առաջարկել Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

- Հանձնաժողովը 09.01.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձը հիմնավորող փաստաթուղթը չներկայացնելու հիմնավորմամբ:

- Հրավերի 2.5 կետով նախատեսված՝ մասնակցին ներկայացվող որակավորման չափանիշներով «ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձ» չափանիշ նախատեսված չէ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

- հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրում Պատվիրատուն պետք է նկարագրեր ձեռք բերվող ծառայությունների նկարագիրը, այլ ոչ թե մասնակցին ներկայացվող «Աշխատանքային ռեսուրսներ» կամ

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշիներին վերաբերող տվյալներ, իսկ Հրավերի տեխնիկական բնութագրում՝ «Կատարողը պետք է ունենա ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձ» պայմանը չի կարող համարվել գնման ենթակա առարկայի բնութագիր,

- տվյալ դեպքում Հրավերի տեխնիկական բնութագրում նախատեսված՝ «Կատարողը պետք է ունենա ԱԷԿ-ների շենքերի սեյսմակայունության գնահատման փորձ» պայմանը, Հրավերով մասնակցին ներկայացվող որակավորման չափանիշներում նախատեսված չէ, հետևաբար նշված հիմքով Ընկերության հատը մերժելն անհիմն է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.01.2019թ. թիվ 27/26-3/1180-19 գրությամբ «ՍԵՅՍՄՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 01839944/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ